«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՃՅՈՒՂԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ՝ 4-ՐԴ/ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ 5
ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏ 6
ԶԱՐԴԱՆԿԱՐ 7
ԴԵԿՈՐԱՏԻՎ ՈՃԱՎՈՐՈՒՄ 9
ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ ԶԱՐԴԱՆԿԱՐ 11
ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԿԱՐ 12
ԲՈՒՍԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԿԱՐ 13
ԳՈՒՅՆԸ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ 14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17
ՀԱՎԵԼՎԱԾ 1 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աճող սերնդի մեջ արժեքային համակարգի ձևավորման, գեղարվեստական կրթության ու գեղագիտական դաստիարակության հարցը այսօր դարձել է համապետական, համաժողովրդական հիմնախնդիր։ Հանրակրթական դպրոցում աշակերտների գեղագիտական և արժեքային համակարգի դաստիարակության ընդհանուր համակարգում նշանակալից դեր ունի գեղարվեստական կրթությունը։ Նրա նշանակությունը անհատի զարգացման ու ձևավորման մեջ բխում է գեղագիտական բուն էությունից, գեղագիտական հարաբերությունների բազմակողմանիությունից՝ կապված մարդու, բնության, արվեստի, հասարակության, ինքն իր հետ ունեցած փոխհարաբերություններից, ինչն ընդգրկում է անհատի գիտակցության, արժեքային համակարգի ձևավորման և գործունեության ողջ բնագավառը:

Դպրոցականի բուն գեղագիտական ունակությունների ձևավորումը սերտորեն կապված է նրա գեղարվեստական կրթության հետ, նրա բարոյական կերպարի, համոզմունքների, իդեալների ձևավորման հետ։ Իսկ դա նշանակում է, որ գեղարվեստական գործունեությունը զգալիորեն ներազդում է անհատի արժեքային համակարգի ձևավորման վրա, այդ արժեքների կարգավորման և համակարգման վրա։ Դպրոցականների գեղարվեստական գերծունեության ակտիվացումը ժամանակակից և հրատապ խնդիր է, որը պետք է լուծել զուտ գիտականորեն հիմնավորված մեթոդներով ու եղանակներով:

Աշխատանքը արդիական է նրանով, որ համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ։ Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու, տեղաշարժվելու կարողությունը։ Այսպիսով, նմանատիպ մասնագետներից պահանջվում է տեսական գիտելիքների իմացություն , դրանք կիրառելու կարողություն և հմտություն, դիրքորոշում։ Կարևորվում է այն, որ աշակերտը ուսումնական հաստատությունից դուրս գա այնպիսի գիտելիքներով, որոնք նա կկարողանա կիրառել գործնականում։ Արդեն վաղուց առաջին տեղում չեն այն տեսական գիտելիքները , որոնք կիրառելի չեն գործնականում։ Հատկանշական է, որ աշակերտը ,ստանալով տեսական

գիտելիքներ, կատարի ճշգրիտ վերլուծություն, կայացնի ինքնուրույն ու ռացիոնալ որոշումներ և գտնի կիրառման արդյունավետ ուղիները: Վերոնշյալ հանքամանքներով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

Դեկորատիվ-կիրառական արվեստն ունի զարգացման պատմական խոր ակունքներ: Դեռ վաղ ժամանակներից մարդը սկսել է զարդարել ու ձևավորել կենցաղում օգտագործվող իրերն ու գործիքները, բնակարաններն ու հագուստը, զենքերը և այլն: Բնության, հասարակական երևույթների, արվեստի, գրական երկերի հմայքն ու գեղեցկությունը զգալու, հասկանալու և այն ճիշտ գնահատելու լավագույն միջոցներից մեկը գեղագիտական դաստիարակությունն է, որի իրականացման ուղիներից մեկը դեկորատիվ ձևավորման արվեստի ուսուցումն է:

Դեկորատիվ ձևավորման արվեստի ուսումնառության ընթացքում խնդիր է դրվում սովորողներին ծանոթացնել դեկորատիվ արվեստի հիմնական տեսակներին, նրանց կատարման հիմնական սկզբունքներին ու եղանակներին, ինչպես նաև զարգացնել ռիթմի, սիմետրիայի, ուրվանկարի, գույների ներդաշնակ համակցությունների, մակերեսի հարթապատկերային մշակման, ոճավորման և այլ հասկացություններ:

Դեկորատիվ արվեստը սովորողներին տալիս է ոչ միայն կատարման կարողություններ ու հմտություններ, այլ նպաստում է նրանց ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Դպրոցական ծրագրում նախատեսված է կենցաղային կիրառական առարկաների զարդապատման կոմպոզիցիոն-գրաֆիկ աշխատանքներ, գունազարդումներ և այլն:

Քանի որ տեխնոլոգիան դպրոցում ինտեգրացնող կրթական ոլորտ է, որը համադրում է գիտելիքներ մի քանի առարկաներից, ուստի պահանջում է բազմակողմանի մոտեցում:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Գեղարվեստական ստեղծագործության առավել հին ու մինչև այժմ զարգացող տեսակներից մեկը կիրառական արվեստն է: Այն իրականացվում է կենցաղի այն առարկաներում, որոնք ստեղծվում են գեղեցկության օրենքներով: Դրանք իրեր են, որոնք պատրաստվում են ոչ միայն որպես օգտակար, այլև որպես գեղեցիկ, ունեն դրանց նպատակն արտահայտող իրենց գեղարվեստական պատկերը: Կիրառական արվեստի գեղագիտական ներգործությունն ամեն օր է, ամեն ժամ , ամեն րոպե: Այն իրերը, որոնք շրջապատում են մեզ, ստեղծում մեր հարմարակեցությունը, մեր կենցաղը, սպասարկում են մեզ մեր առօրյա կյանքում, կարող են բարձրանալ մինչև արվեստի գագաթները:

Կիրառական արվեստն ազգային է իր բուն բնույթով, այն ծնվում է ժողովրդի սովորություններից, հմտություններից, հավատալիքներից և անմիջապես մոտեցված է նրա արտադրական գործունեությանը, նրա կենցաղին:

Հնում կիրառական արվեստի ստեղծագործությունները պերճանքի առարկաներ էին (Հին Եգիպտոս), գեղեցիկ ու հարմար իրերը (Հին Հունաստան), խիստ ճաշակով տարբերվող իրերը (հանրապետության դարաշրջանի Հռոմ):

Միջնադարյան ճգնավորությունը կնիք էր դրել կիրառական արվեստի վրա, նրան տալով զուտ կոնստրուկտիվ, ռացիոնալիստորեն դաժան, օգտապաշտական բնույթ:

Ֆեոդալական հասարակության զարգացման առավել ուշ շրջանում կիրառական իրերի համար բնորոշ է դառնում զարդարանքի ու կառուցվածքի զուգակցումը:

Վերածնության դարաշրջանում կարևոր նշանակություն է ձեռք բերում ֆունկցիաների և գեղեցկության միասնությունը:

Նոր ժամանակներում սկսվում է դիզայնի բուռն զարգացումը:

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏ

Դեկորատիվ արվեստը մարդուն շրջապատող միջավայրի գեղագիտական յուրացումն է: Այդ արվեստը ներխուժում է մարդկանց առօրյա կյանքը, գեղարվեստորեն ձևավորում մարդու ստեղծած <<երկրորդ բնությունը>>՝ շենքերը, կառույցները, զետեղարանները, հրապարակները, փողոցները, ճանապարհները: Այն գեղեցկություն ու հարմարություններ է ստեղծում բնակելի ու հանրային շենքերի ներսում ու շուրջը:

Դեկորատիվ արվեստն իր մեջ ներառում էարվեստի մյուս տեսակների , հատկապես գեղանկարչության ու քանդակագործության նվաճումները: Բուն իմաստով գեղանկարչությունը որպես արվեստ սկզբում գոյություն է ունեցել պատի տեսքով, այսինքն՝ խստորեն ասած դեկորատիվ գեղանկարչություն, և միայն հետագայում ձևավորվեց դազգահային գեղանկարչությունը: Նույնը վերաբերում է նաև քանդակագործությանը:

Դեկորատիվ արվեստի տեսակներց մեկը մոնումենտալ գեղանկարչությունն է, որը կատարված է պատի վրա (որմնանկար) և համադրության մեջ է գտնվում ճարտարապետական պատկերի հետ: Որմնանկարչության անվանումն առաջացել է նրա տեխնիկայից.

<< ալ ֆրեսկո >> նշանակում է թաց սվաղի վրա ջրով բացած ներկերով կատարված նկար :

Միքելանջելոյի, Ռաֆայելի որմնանկարները պատկանում են մոնումենտալ-դեկորատիվ ստեղծագործություններին:

Դեկորատիվ արվեստի զարմանալի ստեղծագործություններին է վերաբերում Վատիկանի Ստանցա դելա Սենյատուրան: Այդ սենյակի առաստաղի ու պատերի նկարները, որ կատարել է Ռաֆայելը, նվիրված են աստվածաբանությանը, արդարադատությանը, փիլիսոփայությանը, գիտությանը, պոեզիային:

Դեկորատիվ արվեստը զարդարման և ոչ թե զարդարամոլության արվեստ է: Այն օգնում է ճարտարապետական ամբողջական անսամբլ ստեղծելուն: Դեկորատիվ արվեստի ստեղծագործությունները ոչ թե մեռած խորհրդանիշներ են, այլ մարդկային գործերի, զգացմունքների, մտահղացումների կենդանի գրառումներ:

ԶԱՐԴԱՆԿԱՐ

Առարկան դեկորացնելու արվեստը սկսվում է մտքում,ապա պատկերվում թղթի վրա: Այն կարող է լինել հարթապատկերային կամ ծավալային, ինչպես բազմագույն, այնպես էլ միագույն:

Զարդանկարի տարրերը վերցվում են բուսական, երկրաչափական և կենդանական մարմիններից պայմանավորված ընտրած թեմայի բովանդակությամբ և նկարչի հայեցողությամբ:

Զարդանկարի տարր կարող են դառնալ եռանկյունը, քառանկյունը, շեղանկյունը, զսպանակը, շրջանը, տերևները, ծաղիկները, միջատները,կենդանիները, թռչունները և այլն:

Որոշ դեկորատիվ ձևավորումների ժամանակ օգտագործվում են նաև զարդանկարի բոլոր տարրերը միասին վերցրած: Ինչպիսի տարրերից էլ որ կազմված լինի զարդանկարը , այն պետք է անպայմանորեն համապատասխանի ձևավորվող առարկայի կիրառական նշանակությանը: Նման դեպքերում ընտրվում են առարկայի տիպիկ նշանները և անտեսվում պատահականները: Բացի առարկայի կիրառական նշանակությունից, զարդանկարը պետք է հարմարեցնել նաև ընտրած առարկայի նյութին: Եթե համեմատենք որևէ իրական առարկա նրա գեղարվեստական արտացոլման հետ , կտեսնենք նյութի որոշակի ազդեցությունը նրա կերպարի ձևավորման վրա, միաժամանակ կհամոզվենք, որ բնական ձևերի վերափոխման ընդհանրացման ժամանակ փոխվում են նաև առարկայի բնական համաչափությունները, գույնը:

Ըստ կոմպոզիցիայի , որը պայմանավորված է առարկայի ձևով, զարդանկարը լինում է ժապավենաձև, կենտրոնակազմ, եզրավոր, հերալդիկ և այս տիպերի բարդ համադրումներով:

Լինելով ճարտարապետության ու կիրառական արվեստի ստեղծագործությունների մեծ մասի հիմնական տարրերից մեկը՝ զարդանկարը հանդես է գալիս նաև որպես ինքնուրույն արվեստ: Զարդանկարի գծերն ու գույները ընդհանրացված <<պայմանական>> ձևով, պատկերում են այս կամ այն բնական երևույթը: Զարդանկարի ամբողջական պատկերը ամենից առաջ արտահայտում է որոշ աշխարհազգացում, կյանքի

նկատմամբ մարդկային վերաբերմունք՝ ուրախ կամ, ընդհակառակը, ընկճված, պարզ ու հասարակ, կամ ,ընդհակառակը, բարդ հակասական և այլն:

Զարդանկարը կազմվում է որոշ մոտիվներից, որոնք զուգակցվում են այս կամ այն յուրաձև միասնության մեջ: Մոտիվը՝ դա առանձին շատ ստեղծագործություններում կրկնվող գծերի, պատկերների միահյուսվածք և գույների զուգակցություններ են: Զարդապատկերային մոտիվներում ու դրանց զուգակցություններում ընդհանրացված ձևով արտահայտվում է ժողովրդի յուրահատուկ բնավորությունը, նրա կեցության ու հոգեբանության առավել կարևոր և անկրկնելի գծերը: Զարդանկարի ճիշտ ընկալումը հնարավորություն է տալիս խորապես իմաստավորել ժողովրդի ազգային յուրահատկությունը:

Զարդապատկերն իր հերթին կարևոր դեր է խաղում մյուս արվեստներում՝ որպես բաղկացուցիչ տարր մտնելով հագուստի, ժողովրդական գունավոր փորանկարների մեջ և այլն:

Զարդանկարին միավորող, պատկերավոր ամբողջություն ստեղծող տեսք է հաղորդում ռիթմը :

Զարդանկարի մեջ սա միանման էլեմենտների կրկնությունն է:



ԴԵԿՈՐԱՏԻՎ ՈՃԱՎՈՐՈՒՄ

Աշխատելու ընթացքում գեղարվեստական ընդհանրացման համար առավել բնութագրական է մտածողության անպիսի հատկանիշը,ինչպիսին է առարկայի ոճավորումը: Ոճավորման ընթացքում գլխավորի ընդգծումը պայմանավորված է զարդարարական արվեստում ընդհանրացման ձևերի առանձնահատկությամբ:

Դեկորատիվ ոճավորումը պատկերվող առարկայի դեկորատիվ արտահայտումն է նկարի ձևի , գույնի, ծավալի կրճատման միջոցով : Սա հարկավոր է գլխավորապես զարդանկար անելիս, երբ առարկայի բնական ձևը կերպարանափոխվում է՝ դառնալով զարդ : Ոճավորման պրոցեսի ընթացքում ձևերը փոխվում են կախված զարդարվող առարկայի նյութից և հատկություններից :

Հաշվի առնելով առարակայի նպատակայնությունն ու ձևը, որի համար ստեղծվում է զարդարարական նշանակետ մոտիվը, ըստ այդմ էլ պետք է ընհանրացվի բուսական և կենդանական բնական ձևերը: Պետք է ընդգծել բնականի բնութագրական մասերը,իսկ մյուս մասերը՝ անտեսել: Սա ամենակարևոր պայմանն է: Այդ ժամանակ առաջանում է առարկայի մանրամասների նոր համադրություն, որը համապատասխանում է զարդարարական աշխատանքում պատկերելու պահանջներին: Արդյունքում տեղի է ունենում ոչ միայն մասնիկների պարզորոշ պատկերում, այլև մանրամասների նոր զարդարարական համակարգի ստեղծում:

Դիզայնի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել ծավալային ձևի ոճավորումը: Հաստոցային արվեստում ոճավորումը դեկորատիվ տարր է մտցնում:

Ոճի մեջ իրականացվում է կամ ընդհատվում է գեղարվեստական հաղորդակցումը. իրականություն-կերտող-ստեղծագործություն-կատարող-յուրացնող-իրականություն: Այդ շղթայիկի ծայրերին գտնվում է ռեալությունը. դա ընկալում է արվեստագետը և դրա վրա էլ արվեստի ներգործության տակ ազդում է հասարակությունը :



ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ ԶԱՐԴԱՆԿԱՐ

Այն բաղկացած է պատկերավորման մոտիվներից՝ երևակայական, իրական գազաններ և թռչուններ կամ նրանց մարմնաձևերի առանձին մասեր: Այդպիսի զարդանախշը սկզբնավորվել է որոշակի կենդանիներ պաշտելու և աստվածացնելու ժամանակներում, առաջին հերթին գիշատիչ գազաններ ու թռչուններ պաշտելու համար՝ նրանց հատկությունների համար: Կենդանակերպ գեղանախշի երևան գալու համար փոքր դեր չեն կատարել նաև հետագա շատ սերունդների այն պատկերացումները, թե հնադարում նման կենդանիները համարվում էին նրանց ցեղի նախահայրեր:

Երևակայական կենդանիները Հին Եգիպտոսի արվեստում . արծվառյուծ (հրեշ՝ կիսառյուծ, արծվային կտուցով կիսանոխազի տեսքով) որպես գերագույն իշխանության խորհրդանիշ, թագավորի ուղեկից Սֆինքս՝ որպես կյանքի անլուծելի առեղծվածի խորհրդանիշ:

Երևակայական կենդանիները Հին Արևելքի արվեստում. Սիմարֆ (թևավոր շուն-թեփուկավոր ձուկ) Հին Իրանի զարդանկարում:





ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԿԱՐ

Հիմնական խորհրդանիշներն են շրջանը, քառակուսին կամ շեղանկյունը (արևը), հորիզոնական ուղիղ գծերը (երկիր), ալիքավոր գծերը (ջուր): Դրանց ռիթմիկ դասավորությունն առարկայի վրա, ինչպես նաև ավելի բարդ տարրերի փոխակերպումները տարբեր դասավորությամբ:

Շրջանը՝ արևի խորհրդանշանը, բնորոշ է աշխարհի շատ ժողովուրդների զարդաքանդակմանը:

Շրջանը՝ լույսի պատկերը, հանդիպում է հիմնականում Միջին Ասիայի և նրան հարևան ժողովուրդների մոտ:

Շրջանավոր մոտիվներն առավել հաճախ օգտագործում էին տարբեր երկրների ժողովուրդներ՝ կենցաղային առարկաներ ձևավորելու դեպքում:

Քառակուսին զարդանկարման արվեստում երկրի խորհրդանիշն է:

Եռանկյունին՝ որպես հմայիլ ընդունված է աշխարհի ժողովուրդների զարդանկարներում:

Հայկական զարդապատկերներում շեղանկյունը և խաչը բազմապիսի կոմպոզիցիաների հիմնական մոտիվներն են, ծառի պատկերի խորհրդանշանը:

ԲՈՒՍԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԿԱՐ

Բուսական զարդանկարի տարրեր կարող են լինել տերևները, ծաղիկները, պտուղները, ճյուղերը, ծառերը և այլն:

<<Ծաղիկը>> բուսական զարդանկարի գլխավոր տարրերից մեկն է :

<<Ծաղկող այգու >>պատկերը զարդանկարում երջանկության և բարեհաջողության մասին պատկերացումների մարմնավորում է:

<<Իսլիմին>>ծաղկաշղթան ՝ միջինարևելյան տարածաշրջանի փայլուն տարրն է: Խաղողի վազը <<Կյանքի ծառի>> խորհրդանիշն է Հին Հունաստանի , Բյուզանդիայի, Իրանի, Չինաստանի վարպետների զարդանկարներում:

ԳՈՒՅՆԸ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Դեկորատիվ ձևավորման առաջադրանքների կատարման ժամանակ սովորողը, ելնելով իր ընտրած թեմայից, ստեղծում է նրա գունային գաման: Նա պետք է իմանա , որ գույների մի քանի համակցություններ թողնում են հաճելի կամ տհաճ , ուրախ կամ տխուր զգացողություն:

Օրինակ՝ սև գույնը թողնում է տխուր , ճնշող տրամադրություն, երկարատև շփումը կարմիր գույնի հետ առաջացնում է հոգնածություն և գրգռվածություն:Մեղմ հագեցած կանաչ գույնը թողնում է հանգստի և հովի զգացում և այլն: Գույնը բնութագրվում է երանգ, հագեցվածություն և պայծառություն հասկացություններով: Երանգը գույնի տարբեր աստիճանի մուգ և բաց վիճակներն են:

Հագեցվածությունը գունային երանգի արտահայտման աստիճանն է:

Պայծառությունը գույնի լուսավորության աստիճանն է: Ամենապարզ գույնը սպիտակն է թվում:Սպիտակ գույնի լուսեղությունը նվազեցնելով, կարելի է ստանալ այս կամ այն չափով մութ, երանգազուրկ բոլոր գորշ գույները: Երանգավոր գույները երանգազուրկներից տարբերվում են այս կամ այն գունային տոնով: Որքան հստակ է արտահայտված գունային տոնը, այնքան գույնը հագեցած է համարվում:

Գույները համակարգելու համար մասնագետները կիրառում են տարբեր համակարգեր: Գունային օղակը ամենալավ միջոցն է գունային կողմնորոշման համար: Այն առաջին անգամ ստեղծել է անգլիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս, աստղագետ, ալքիմիկոս Իսահակ Նյուտոնը և հետագայում բարելավվել այլ մասնագետների կողմից: Գունային օղակը ցույց է տալիս թե ինչպես են հիմնական գույները խառնվում և ստեղծում այլ երանգներ:





Զարդարարական նկարչության մեջ պատկերի ընկալման միայն հուզականությունը շատ բանով կախված է գույնից: Գույնի գեղագիտական ազդեցությունից առաջացած զուգորդումների շարքը միաժամանակ որոշվում է մի շարք պատճառներով: Այստեղ, ակներևաբար, կարելի է դասել ազգային պատկանելիությունը, ավանդույթները, բնավորությունը, խառնվածքը: Հնարավոր է նաև, որ գունային օրինաչափությունները թելադրեն այնպիսի գունային համադրություն,որն անմիջականորեն գոյություն չունի իրականում, համանման երևույթ տեղի է ունենում նաև տեսանելի մասնիկների պատկերումը պարբերայնության միջոցով ստեղծված զարդակիրառական համակարգում, որտեղ մասնիկների միջև եղած կապը չի համապատասխանում նրանց բնական կապի մասին մեր պատկերացումներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արժեքային համակարգի ձևավորման և գեղագիտական բոլոր գործոնները պարունակում են տեխնոլոգիայի ուսումնական գործընթացում: Գեղեցիկ ձեռագիր ունենալը, գեղեցիկ հագնվելը, գեղեցիկ հարաբերվելը և ստեղծագործելը համարվում են անհատի դաստիարակության հիմնական պայմանները, որը և մենք ստանում ենք տեխնոլոգիայի ուսումնադաստիարակչական հնարավորությունների առկայության դեպքում:

Դեկորատիվ ձևավորման արվեստի ուսուցումը պետք է սերտորեն կապված լինի բնականից նկարչության հետ, այն միաժամանակ պետք է սնվի ազգային ժողովրդական ստեղծագործությունների ակունքներից : Սովորողը, դիտելով և ուսումնասիրելով ազգային ժողովրդական ստեղծագործությունները, սկսում է ընկալել նրա բազմազան ձևերի ու գույների համադրությունների գեղեցկությունը, ազգային զարդանկարչության կառուցման բնորոշ կողմերն ու առանձնահատկություններ:

Սերտորեն կապված լինելով բնությանը՝ ձևավորող նկարիչը հարստացնում և զարգացնում է իր ստեղծագործական գիտելիքների պաշարը, կատարողական վարպետությունը, բնությունը ռեալ ընկալելու զգացողությունը: Դեկորատիվ ձևավորման արվեստի ուսուցման ժամանակ իրականացվում են գեղագիտական դաստիարակության մի շարք խնդիրներ՝ ճաշակի զարգացում գույների ներդաշնակ ընտրություն, ծավալների ու ձևերի ընդհանրացում , կատարողական վարպետություն և այլն:

Այս ամենը հավաստում է, որ առարկայի՝ տեխնոլոգիայի դասավանդումը անմիջապես կապված է աշակերտների մտահորիզոնի զարգացման ու նրանց մեջ արժեքային համակարգի ձևավորման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ . Խաչիկյան Լ . Ներսիսյան _ Դպրոցական դեկորատիվ ձևավորում
2. Յուրի Բորև - Գեղագիտություն
3. Վ . Կոժինով - Արվեստի տեսակները
4. Ս.Հովսեփյան, Ա.Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան –Տեխնոլոգիա 5, Երևան 2014, էջ128
5. Ս.Հովսեփյան, Ա.Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան –Տեխնոլոգիա 7, Երևան 2016, էջ166
6. Անի Խուդոյան «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքների ուղեցույց», (Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար), Երևան, 2018

Հավելված 1

Հատվածներ իմ դասընթացներից ուսումնասիրությունների շրջանակներում:

Չհեռանանք մեր ակունքներից…